ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐ ՍԻՍԻԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՕՆԻԿ ԽՆԿԻԿՅԱՆ

1970 թ. սկսած ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Զանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները հետազոտող արշավախումբը պեղումներ է կատարում Մեղրիի, Ղափանի, Գորիսի և Սիսիանի շրջաններում։ 1982—1983 թթ. արշավախումբը աշխատանքներ է կատարել Սիսիան քաղաքի և Նորավան գյուղի շրջակայքում գտնվող դամբարանադաշտերում, որոնք տարածվում են Գորիս տանող մայրուղու երկարությամբ։ Ստորև տալիս ենք այդ երկու դամբարանադաշտերի նկարագրությունը։

Սիսիանի դամբարանադաշտ—*գտնվում է քաղաքից 4 կմ հյուսիս և բաղկացած է մի քանի տասնյակ դամբարանթմբերից, որոնցից պեղվեցին տասներեքը։ Կառուցողական առանձնահատկություններով դրանք բաժանվում են երկու տեսակի. ա) տարբեր մեծության քարերից կազմված, ցածր քարակույտերի տեսքով շրջաններ, որոնց տրամագիծը տատանվում է 8—16 մ, իսկ բարձրությունները՝ 0,6—1 մ (I 1ա, 2ա)*[1] *և բ) հող ու քարի լիցքից կազմված, 20—25 մ տրամագծով և 1,8—2,5 մ բարձրությամբ, ցածր բլրակների տպավորություն թողնող դամբարանթմբեր (I 3ա)։ Առաջին տեսակն իր հերթին, ըստ դամբարանախցերի տեղադրության, բաժանվում է երկու տարբերակի. ա) վերգետնյա (I 1բ) և բ) ստորգետնյա կառուցվածք ունեցող քարարկղներ (դամբ. № 1 և № 3, I 2բ)։ Դամբարանթմբերի երկրորդ տեսակի դամբարանախցերը միայն վերգետնյա են (I 3բ)։ Անկախ տեսակների ու տարբերակների պատկանելությունից, բոլոր դամբարանախցերը լցված են հողով ու տարբեր մեծության քարերով և ծածկված 2—5 սալաքարերով։ Վերջիններս պարզ առանձնանում են վերգետնյա դամբարանախցերի քարալիցքում։ Դամբարանախցերի կողմնորոշումը անկայուն է. առկա են ինչպես հյուսիսից հարավ, արևելքից արևմուտք, այնպես էլ որոշակի շեղումներ դրսևորող դամբարանախցեր։ Վերջիններում դիաթաղումը կատարված է անախստեմ՝ բացակայում է կմախքների որոշակի ուղղվածություն։ Ավելին, նկատվում է, որ պեղված բոլոր դամբարաններում տեղադրված են ոչ թե ամբողջական կմախքներ, այլ՝ դրանց առանձին մասեր։ Այսպես, № 5 դամբարանախցում կմախքից բացակայում էր կրծքավանդակը, № 6-ում՝ կրծքավանդակը, կոնքը և ազդրոսկրները, № 7-ում՝ կոնքոսկրը և ոտքերի առանձին ոսկորները, իսկ № 8-ում գտնվեց միայն ձեռքի ոսկոր և այլն։ Այս երևույթը հետևանք է ոչ թե ոսկրերի բնական քայքայման, այլ, ինչպես կտեսնենք ստորև՝ դիակի նախնական մասնատման, քանի որ բոլոր դամբարանախցերում գտնված կմախքների մնացորդները լավ պահպանվածություն ունեն։ Ուղեկցող նյութերը, բացառությամբ առանձին դեպքերի, դամբարան են դրված նախապես կոտրված և որպես կանոն՝ թերի վիճակում ու սփռված են դամբարանախցերում։ Դամբարաններից յուրաքանչյուր տեսակի ու տարբերակի մասին պարզ պատկերացում տալու նպատակով, նկարագրենք մի քանիսը։*

Դամբարան № 1—*պեղումների ընթացքում դամբարանթմբի քարալիցքում գտնվեցին բրոնզե դաշույն (II_1), դանակ (II_2), երկու օղ (II_5) և խեցանոթների բեկորներ ($II_{21, 25}$)։ Քարակույտի տակ՝ 0,7 մ խորության վրա, երևան եկան երեք ծածկասալեր, որոնք փակել էին հյուսիսից հարավ ուղղված, 1,8×0,8×0,8 մ չափերի ստորգետնյա դամբարանախուցը։ Կմախքի փշրված ոսկոր-*

---

[1] *Հռոմեական թվանշանները ցույց են տալիս ապյուսակների, իսկ արաբականները՝ նկարների համարները։*

ների շերտը ձգվում էր արևելք-արևմուտք առանցքով, գլխով՝ արևմուտք։ Հայտնաբերվեցին նաև գավաթների (II_{46}), քրեղանի (II_{33}), թեյնիկաձև անոթի (II_{30}) բեկորներ և վանակատի երեք ծլեպ (II_{18-20}), որոնցից մեկի եզրը թեթև հարդարված է (II_{20}) և, հավանաբար, քերիչի դեր է կատարել։

Պեղված մյուս դամբարանախցերը վերգետնյա կառուցվածք ունեն։ Դրանցից ինը պատկանում են դամբարանաթմբերի առաջին տեսակին։ Ներկայացնենք երկուսը։

Դամբարան № 2 (չափերը՝ 2,4×0,8×1 մ)—արևելք-արևմուտք կողմնորոշված այս դամբարանախցի արևմտյան հատվածում հայտնաբերվեց կըմախքի փշրված գանգ, իսկ արևելյանում՝ ոտքեր։ Կմախքի մյուս մասերը բացակայում էին։ Ոսկորների շրջակայքում թափված էին երկու քրեղանների ($II_{33, 37}$), մեկ գավաթի (II_{49}) բեկորներ ու սպիտակ բծերով, կանաչավուն երանգի քարից պատրաստված ուլունք (II_{12})։

Դամբարան № 10 (չափերը՝ 3×0,8×0,8 մ)—արևելք-արևմուտք կողմնորոշված այս քարարկղի հյուսիսային պատի մոտ դրված էին խոշոր եղջերավոր անասունի ոտքի առանձին ոսկորներ, իսկ հարավայինի մոտ՝ երեխայի ստորին ծնոտ ու ձեռքի ոսկոր։ Դրանց մոտ ընկած էին բրոնզյա երկու օղեր ($II_{6, 7}$), սարդիոնից ու շաղախից պատրաստված երեք ուլունք ($II_{12, 13}$), երկու կճուճի (II_{29}), միականթ գավաթի (II_{46}) ու թեյնիկաձև անոթի բեկորներ (II_{30})։ Դամբարանի արևմտյան պատի մոտ գտնվեցին բրոնզյա օղ (II_{6}) ու վանակատե ծլեպ։

№ 4 և № 9 դամբարանների դամբարանաթմբերը պատկանում են երկրորդ տեսակին։ Տալիս ենք մեկի նկարագրությունը.

Դամբարան № 9 (չափերը՝ 3,8×1,7×1,8 մ)—արևելքից արևմուտք ուղղված այս խոշոր քարարկղի արևմտյան պատի տակ գտնվեց կմախքի ոտքի մեկ ոսկորը, իսկ մյուսը՝ ձեռքերի ոսկրերի հետ դրված էր արևելյան պատի մոտ։ Ուղեկցող նյութերն էին դամբարանախցում սփռված գավաթների (II_{46-48}), փոքրիկ սափորի (II_{26}), կճուճների (II_{29}), թեյնիկաձև անոթի (II_{82}), մատուցարանի (II_{41}), եռոտանի խոշոր մատուցարանի (II_{56}) բեկորներ, երկաթե դանակի մաս (II_{3}), բրոնզե հինգ օղեր (II_{5-7}), սարդիոնից, շաղախից ու բրոնզից պատրաստված ուլունքներ ($II_{12, 13, 15}$), վանակատե միջուկ ու երկու ծլեպ ($II_{18, 19}$)։

Այժմ անդրադառնանք թաղումների ծիսական առանձնահատկություններին. տվյալ դեպքում նկատի ունենք կոտրված և մասնակի վիճակով դամբարանախուց նետված խեցանոթների առկայության և կմախքների մասնատման փաստերը։ Դամբարանում կոտրված ամաններ դնելու սովորույթը հայտնի է նաև Արթիկում[2], Դարանշում, Խուրջին-Հողերում, Ղմշկուտում[3], Շիրակավանում[4], Մեղրաձորում[5], Մինգեչաուրում[6] և այլուր։ Ազգագրական նյութերի համաձայն այս սովորույթը, ուղղված լինելով չարը խափանելու նպատակին, շարունակվում է նույնիսկ մեր օրերում։ Դեռևս առանձին վայրերում նոր ծածկված գերեզմանի վրա մարդիկ կոտրում են բաժակները։ Աման կոտրելու միջոցով չարը վանելու մտայնության ցայտուն օրինակներից է նաև Գ. Սրվանձտյանցի հիշատակած այն սովորույթը, ըստ որի Վանի շրջանի հայերը «եթե ուզեն մեկը իր գնացած ճանապարհեն ետ չդառնա, անոր մեկնած ժամանակ՝ աման մը կը կոտրեն ետևեն և կ'ըսեն. «Երթալդ լինի, գալդ չլինի»[7]։ Մեր նախնիների՝

---

[2] Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 142—143.

[3] С. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976, с. 230.

[4] Պեղումները՝ Ռ. Մ. Թորոսյանի, Լ. Ա. Պետրոսյանի և հեղինակի (չհրատարակված նյութեր)։

[5] Պեղումները՝ Լ. Ն. Բիյագովի (չհրատարակված նյութեր)։

[6] Г. М. Асланов, Р. М. Ваидов, Г. И. Ионе, Древний Мингечаур, Баку, 1959, с. 108—110.

[7] Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 158—159։



Աղյուսակ I

անդրշիրիմյան կյանքի վերաբերյալ ունեցած պատկերացումների հետ է կապված և մյուս երևույթը՝ անդամահատումը, որը դիտված է Հայաստանի և Անդրկովկասի ուշ բրոնզի և երկաթի դարաշրջանի մի շարք հուշարձաններում՝ Լճաշենում, Արթիկում, Աստղի բլուրում, Շիրակավանում, Մաղկաշատում և այլուր[8]։ Այս առումով հետաքրքիր է Ստրաբոնի հաղորդումը կասպիանների (Փայտակարան) թաղման ծեսի վերաբերյալ։ Համաձայն հեղինակի, կասպիանները դիակը դրել են բնակավայրից որոշ հեռավորության վրա և հետևել։ Եթե այն ծվատել են լեշակեր թևավորները, ապա այդ հանգուցյալի հոգին նրանք երանելի են համարել, նվազ երանելի՝ գազանների հոշոտելու դեպքում և դժբախտ՝ անձեռնմխելի մնալու ժամանակ[9]։ Հնագիտական տվյալները հրնարավորություն են տալիս ենթադրել, որ նման ծես կարող է կիրառված լինել նաև վերոհիշյալ հուշարձաններում։ Նշենք, որ Արգիշթիխինիլի պեղումների ընթացքում հայտնաբերվեցին կմախքի փշրված ոսկորներով լցված դիանոթներ[10]։ Նկատելով Էշերիում (Կողքիս) կատարած պեղումների արդյունքներից, Բ. Ա. Կուֆտինը, առաջինն անդրադառնալով այս երևույթի պատճառներին, ցույց տվեց, որ այն պայմանավորված է եղել հոգին մարմնից շուտ անջատելու պատկերացումներով։ Այս ծեսը, ինչպես մատնանշում է հետազոտողը, բնորոշ լինելով զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող ցեղերի համար, լայն տարածում է ունեցել Դաղստանում, Պարսկաստանում, Միջին Ասիայում, Միջերկրակայքում[11]։

Այժմ անցնենք հայտնաբերված նյութերի ուսումնասիրությանն ու թվագրությանը։ Հաշվի առնելով նյութերի համաժամանակյա լինելը, նպատակահարմար ենք գտնում դրանք քննել ըստ տեսակների, նշելով մյուս դամբարանների կոմպլեքսները՝ համաձայն աղյուսակի նկարների։

Դաշույն—պատրաստված է բրոնզից և պատկանում է այսպես կոչված սևանյան տեսակին։ Զգված, կենտրոնական մասում երկու եզրերից թեթևակի նեղացող շեղբով այս զենքատեսակը ավարտվում է կոթի ամրացման համար նախատեսված նեղ, տափակ լեզվակով, որի հիմքամասում գոտեկապ է ամրացված։ Շեղբը երկու երեսներից ընդերկայնական, թույլ եռանկյունաձև

[8] С. А. Есаян, Астхиблурский могильник (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1968, № 6, էջ 82—97); Т. С. Хачатрян, նշվ. աշխ., էջ 146—147.

[9] К. Ган, Известия древних греческих и римских писателей о Кавказе, Тифлис, 1884, ч. 1, с. 78.

[10] А. А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1974, с. 51—55.

[11] Б. А. Куфтин, Материалы к археологии Колхиды, т. I, Тбилиси, 1949, ч. II, § 2.

ուտուցիկություններ ունի (II_1)։ Դաշույնների այս տեսակը, երևան գալով մ. թ. ա. II հազ. վերջում և I հազ. սկզբում, մ. թ. ա. IX—VIII դդ. իր տեղը զիջում է բրոնզե գտեկապ և գլխակալ ունեցող երկաթյա համանման զենքերին[12]։ Բրոնզե նման դաշույններ մ. թ. ա. I հազ. սկզբով թվագրվող կոմպլեքսներում հայտնի են Ռեգկին լագերից, Կարմիր-բերդից, Ղրղիից, Սևանի ավազանի տարբեր հուշարձաններից, Գետաբեկ-Կալաքենդի միջև գտնվող դամբարանադաշտերից և այլ վայրերից[13]։

Դանակներ—ներկայացված են երկու նմուշով. մեկը բրոնզից է, պատկանում է «ածելիաձև» դանակների խմբին, ունի կարճ, տափակ լեզվակ և նեղ, ծայրում բարձրացող ու կլորացող քթիկով շեղբ, որը դեպի հիմքամասը աստիճանաբար լայնանում է (II_2)։ Նման դանակներ հայտնի են Տոլորսից և թվագրվում են մ. թ. ա. I հազ. սկզբով[14]։ Նույն ժամանակաշրջանին են պատկանում Ներքին Գետաշենից ու Առաջաձորից հայտնաբերվածները[15], Այդպիսիները, մ. թ. ա. II հազ. վերջով և I հազ. սկզբով թվագրվող նյութերի ուղեկցությամբ հայտնի են Վարդանլիից, Գետաբեկ-Կալաքենդի միջև գտնվող դամբարաններից, Խոջալիից, Ղարա-Բուլաղից և այլն[16]։ Արևմուտքում նման դանակ հայտնի է Քեթիից և թվագրվում է մ. թ. ա. I հազ. սկզբով[17]։ Մ. թ. ա. IX—VIII դդ. են թվագրվում նաև Նորադուզից, Այրիվանքից և այլ վայրերից գտնվածները[18]։ Այդուհանդերձ այս դանակների լայն տարածման ժամանակաշրջանը մ. թ. ա. II հազ. վերջը և I հազ. սկիզբն է, քանի որ մ. թ. ա. IX—VIII դդ. դրանք հիմնականում փոխարինվում են երկաթից պատրաստվածներով[19]։

Երկրորդ դանակը փաստարկում է, որ զանգեզուրյան կոմպլեքսը պատկանում է մ. թ. ա. I հազ. սկզբին։ Այն երկաթյա նմուշից 5 սմ երկարությամբ պահպանված մաս է, կարճ, տափակ լեզվակով, հիմքամասում 2,3 սմ լայնությամբ շեղբի կիսյակով (II_3)։ Նման դանակներ մ. թ. ա. IX—VIII դդ. նյութերի ուղեկցությամբ առկա են Մուխանում, Աստղաձորում, Դիլիջանում[20] և այլ վայրերում։ Այդուհանդերձ, երկաթյա դանակների սկզբնական նմուշներն ար-

---

12 С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966, с. 73—76.

13 С. А. Есаян, Древняя культура племен..., табл. 136, Г. Е. Арешян, Материалы из раскопок Кармирбердского (Тазакендского) могильника в музее Грузии (*«Բանբեր Երևանի Համալսարանի»*, 1970, 1); А. А. Ивановский, По Закавказью («Материалы по археологии Кавказа» (далее МАК), т. VI, М., 1911).

14 А. О. Мнацаканян, Находки предметов бронзового века в селении Толорс (в Зангезуре) Арм. ССР («Краткие сообщения Института истории материальной культуры» (далее КСИИМК), вып. LIV, 1954).

15 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 156—157; К. Х. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе («Советская археология» (далее СА), XXVII, 1957, с. 138).

16 С. М. Казиев, Варданлинские археологические раскопки («Материальная культура Азербайджана» (далее МКА), т. VII, Баку, 1973, с. 146—160, табл. I, II); О. А. Даниелян, К хронологии некоторых курганов Азербайджана, МКА, т. VII, Баку, 1973, с. 103—107; А. А. Ивановский, указ. соч., табл. XVI.

17 *Լ. Ա. Պետրոսյան, Հետախուզական պեղումներ Քեթիում (1970) («Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1973, № 4)։*

18 А. А. Мартиросян, Армения в эпоху..., с. 210; Т. С. Хачатрян, Раскопки в Айрванке (*ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 12, էջ 101)*.

19 Т. С. Хачатрян, Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении (*«Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», հ. 5, Երևան, 1959, էջ 223)։*

20 А. О. Мнацаканян, Раскопки могильников на осушенной территории оз. Севан, СА, XXIII, с. 195.

դեն հայտնի են մ. թ. ա. X—IX դդ.։ Այդ ժամանակաշրջանով են թվագրվում Նորադուզի № 3 դամբարանից և Արթիկից հայտնաբերվածները[21]։ Այսպիսով, դանակների և դաշույնների զուգահեռները ցույց են տալիս, որ Սիսիանի նյութերը մ. թ. ա. X դարից վաղ և IX դարից ուշ լինել չեն կարող։

Պերճանքի առարկաներ—գտնված են բրոնզե ատամնավոր մակերես ունեցող ապարանջան, օղեր, կոճակներ, կախիկ և սարդիոնից, շաղախից պատրաստված ուլունքներ։ Ապարանջանը կտրվածքում շրջանաձև տեսք ունի և ավարտվում է մոտեցող ծայրերով (II_4)։ Օղերը 15 հատ են, որոնցից չորսը կտրվածքում շրջանաձև լարեր են՝ պարուրաձև փաթաթված (II_5), իսկ հինգը՝ կտրվածքում տափակ են ու շրջանաձև, ավարտվում են իրար վրա բերված ծայրերով (II_6)։ Մնացած վեցը, որոնցից երկուսը թերի են, ունեն մոտեցող ծայրեր (II_7)։ Սարդիոնից պատրաստված ուլունքները կոնաձև, սկավառակաձև, ոսպնյակաձև ու գլանաձև են ($II_{12, 16}$)։ Այստեղ ենք դասում և սպիտակ բծեր ունեցող, կանաչավուն երանգի քարից պատրաստվածը (II_{12})։ Տարբեր ձևեր ունեն նաև կապույտ, կապտա-կանաչավուն ու սպիտակ շաղախից պատրաստվածները։ Սրանք հորիզոնական ակոսներով գոտևորված, գլանաձև, կտրվածքում խաչաձև տեսք ունեցող բազմանիստ, տակառաձև, պտտագլանի ձևով և այլ տեսք ունեցող տարբեր չափերի նուրբ զարդեր են, որոնց մակերեսները նախշված են ցանցկեն կամ թեք տարված գծերով (II_{13})։ Մեկական օրինակով են ներկայացված կավից ու բրոնզից պատրաստվածները։ Առաջինն ունի երկկոնիկ տեսք, որի կողերը զարդարված են սեղմամբ ստացված ձվածիր ճկվածքներով (II_{14}), իսկ երկրորդը՝ պարուրաձև փաթաթած տափակ բրոնզե լար է (II_{15})։ Ինչ վերաբերում է կախիկներին, ապա դրանցից մեկը բրոնզից է, տանձաձև և վերին մասում ունի կլոր անցք (II_{11}), իսկ մյուսը ոսկրից է՝ քառակող տաշած և նուրբ հղկված ձողի տեսքով, որի վերին մասում անցք է բացված, իսկ ներքևում կոթունն ավարտվում է օղակի ձևով (II_{17})։

Պերճանքի առարկաների վերջին խումբն են կազմում կիսագնդաձև, ետեվում փոքր, տափակ կամրջակով բրոնզե կոճակները (II_{8-9}) և կոնաձև, երկու եզրերից ծալված, բրոնզե թիթեղից պատրաստված ճարմանդը։ Վերջինիս վրա անցք է բացված, հավանաբար, կաշվե գոտուն ամրացնելու նպատակով (II_{10})։

Նկարագրված իրերի գերակշռող մասը հայտնաբերված նյութերի ստույգ թվագրման համար առանձին նշանակություն չունի, քանի որ առանց ձևական փոփոխությունների կրելու երկար են գոյատևում։ Այսպես, ապարանջանի, կոճակների, օղերի, տանձաձև կախիկի զուգահեռները առկա են ինչպես ուշ բրոնզի, այնպես էլ վաղ երկաթի ու հետագա ժամանակաշրջանին պատկանող հուշարձաններում։ Նյութի թվագրման համար էական նշանակություն չունեն նաև սարդիոնից ու շաղախից պատրաստված ուլունքները, բացառությամբ տակառաձև ու պտտագլանի տեսք ունեցողների, որոնք սովորաբար ուղեկցվում են մ. թ. ա. I հազ. սկզբից երևան եկած «դոմինոյաձև» ուլունքներով[22]։ Ինչ վերաբերում է ոսկրից պատրաստված կախիկ-հմայիլին, ապա դրա զուգահեռը, վերը նկարագրված դաշույնների և այլ մ. թ. ա. I հազ. սկզբով թվագրվող նյութերի ուղեկցությամբ, հայտնի է Ախլաթյանից[23] և Կուշչի (Խաչակ) գյուղի շրջակայքում կատարած Գ. Օ. Ռոզենդորֆի պեղումներից[24]։

Խեցեղեն—ներկայացված են սափորներով, գավաթներով, կճուճներով, թեյնիկաձև անոթներով, քրեղաններով և այլ ձևերով, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են առանձին տարբերակների։ Սափորները (13 հատ) միա-

---

21 А. А. Мартиросян, Армения в эпоху..., с. 196; Т. С. Хачатрян, Древняя культура..., с. 237, рис. 151.

22 А. А. Мартиросян, Армения в эпоху..., с. 210, рис. 82; Т. С. Хачатрян, Древняя культура..., с. 242—243, рис. 155.

23 Պեղումները Մ. Ս. Հասրաթյանի (չհրատարակված նյութեր)։

24 ՍՍՀՄ պատմության պետական թանգարան (ՍՍՀՄ ՊՊԹ), գույք № 77/356։



Աղյուսակ II

ՍԻՍԻԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ.—Նկ. 1, 2, 5, 18—21, 25, 30, 33, 46—դամբ. № 1; Նկ. 12, 33, 37, 49—դամբ. № 2; Նկ. 8, 9, 22—24, 30, 33—40, 43, 46, 56—դամբ. № 3; Նկ. 5—7, 10, 17, 21—22, 27—29, 31, 34, 48—50, 53, 55—56—դամբ. № 4; Նկ. 31, 48—դամբ. № 5; Նկ. 5, 7, 11—13, 25—26, 35, 38—39, 42, 44—45—դամբ. № 6; Նկ. 22, 29, 49, 52—դամբ. № 7; Նկ. 25, 29, 33, 46, 14—դամբ. № 8; Նկ. 3, 5—7, 12, 13, 15, 18—19, 26, 29, 32, 41, 46—48, 56—դամբ. № 9, Նկ. 6—7, 12—13, 30, 46—դամբ. № 10; Նկ. 22, 28, 33—34, 38—39, 51—դամբ. № 11; Նկ. 4, 12—13, 19, 29, 54—դամբ. № 12; Նկ. 12, 29, 34—դամբ. № 13։

կանթ անոթներ են, որոնցից երեքն ունեն ձգված, փքուն իրան և փողաձև լայնացող վիզ։ Սրանց սև կամ դորշ, անփայլ մակերեսները վերին մասում զոտևորված են հորիզոնական ակոսներով, որոնցից մեկն ունի թեք, փորագիր գծեր, իսկ երկուսի իրանները ստորին կեսերում զարդարված են սեղմմամբ ստացված ուղղահայաց իջնող գծերով (II$_{21}$)։ Մյուս ութ սափորներն ունեն

գնդաձև իրաններ և կարճ, լայն վզից ուսին միացող աղեղնաձև կամ ձևավործնկաձև կանթեր։ Այս խմբի սափորների սև, գորշ, մուգ-դարչնագույն ու բացկարմրավուն անփայլ երանգ ունեցող մակերեսները հիմնականում անզարդ են (II_{22}), երբեմն՝ վերին մասում գոտևորված հորիզոնական ակոսագծերով։ Մընացած երկուսը թույլ արտահայտված երկկոնիկ տեսք ունեն։ Մեկն ավարտվում է բարձր, մյուսը՝ համեմատաբար կարճ, գլանաձև վզով, որոնք, ինչպես և իրանների վերին մասերը, զարդարված են թեք և հորիզոնական տարված նուրբ մատնեքոմով։ Անոթներն ունեն դարչնա-գորշավուն և սև, թույլ փայլեցրած մակերես (II_{23-24})։

Առանձին խումբ են կազմում փոքր անոթները, որոնք գնդաձև իրանով ու փողաձև լայնացող վզով, նույն սև կամ գորշ անփայլ մակերեսով սափորներն են, միայն թե զուրկ են կանթերից և առանձնանում են չափերի փոքրությամբ։ Դրանցից երկուսի իրանները վերին մասում զարդարված են նուրբ մատնեքոմով (II_{26}), որը մ. թ. ա. I հազ. սկզբով թվագրվող խեցեղենի բնորոշ գծերից է։ Այդ ժամանակաշրջանի սափորների համար հատկանշական են դառնում նաև ձևավոր-ծնկաձև կամ երկսապատ կանթերը[25], որոնք անծանոթ են ուշ բրոնզեդարյան նյութերի համար։ Ուշ բրոնզին դեռևս հատկանշական՝ մակերեսի սև, թեթևակի փայլեցրած գույնը, նորահայտ այս նյութերի վրա իր տեղը զիջում է սև անփայլ ու գորշ երանգներին, որոնց կողքին առկա են և շագանակագույնի ու կարմրի տարբեր երանգավորումները։ Այս հատկանիշների առկայությունը հայտնաբերված խեցեղենի վրա կրկին փաստարկում են պեղված դամբարանների՝ մ. թ. ա. I հազ. սկզբին պատկանելը, որը հաստատվում է նաև սափորների համեմատական քննության ընթացքում։ Այսպես, նշված առանձնահատկություններն ունեցող սափորներ, նույն դաշտյունների, դանակի և այլ՝ մ. թ. ա. I հազ. սկզբով թվագրվող նյութերի հետ, հայտնաբերված են Ղարաբաղի Արջաձոր, Սխտորաշեն, Սբխավենդ գյուղերի դամբարաններից[26], նույն ժամանակաշրջանով են թվագրվում և Կարմիր-բերդի դամբարաններից հայտնաբերված համանման անոթները[27]։ Մատնեքաղարդ ու ձևավոր-ծնկաձև կանթեր ունեցող սափորները առկա են նաև Արթիկի մ. թ. ա. X—IX դդ. թվագրվող կոմպլեքսներում և այլուր։

Կճուճներ—կլորացող իրաններով և դուրս ճկվող շուրթով, սև կամ դարչնա-գորշավուն, անփայլ, հաճախ մրածածկ մակերեսներով անոթներ են։ Երկուսն ունեն շրթից սկսվող և ուսին միացող աղեղնաձև կանթեր (II_{27}), իսկ մյուս տասը զուրկ են դրանցից (II_{29})։ Առանձին խումբ են կազմում իրանի ուռուցիկ մասում օղակաձև կանթեր ունեցող կճուճները (II_{28}), որոնք վերին մասում զարդարված են ակոսագծերով, հաճախ հատիկազարդով։ Եզակի են անզարդ կճուճները։ Օղակաձև և աղեղնաձև միականթ կճուճները լայն տարածում են ստանում մ. թ. ա. I հազ. սկզբից և անծանոթ են ուշ բրոնզեդարյան հուշարձաններին։ Նման կճուճներ հայտնի են Ռեդկին լաղերից, Էլառից[28], Թեյշեբաինիի մինչուրարտական բնակավայրից, Երևանի հնավայրերից (Կարմիր-բերդ, «Արշեստական ալմատների գործարան» և այլն) ու մ. թ. ա. I հազ. սկզբով թվագրվող այլ հուշարձաններից։

Թեյնիկաձև ամաններ—սրանք կրկնում են անփույթ պատրաստված առօրյա, խոհանոցային նշանակություն ունեցող նկարագրված կճուճների ձևը։ Հայտնաբերված այսպիսի վեց ամաններից երեքի իրանները փքուն տեսք ունեն, վզերը դուրս են թեքված, իսկ ծորակները ամրացված են ուսի վրա (II_{30})։ Մյուս երկուսը նույն ձևով կլորացող իրաններով և դուրս ճկվող շրթերով հատիկազարդ կճուճներ են, միայն թե սրանց ծորակի քթիկից դեպի շուրթը ձգվում է տափակ, լայն կամրջակ (II_{31})։ Վեցերորդ անոթի ծորակը սկսվելով ուսից, առանց այլ մանրամասների միջնորդավորման, միանում է շրթին։ Նման

25 Т. С. Хачатрян, Древняя культура..., с. 246—247.

26 К. Х. Кушнарева, Некоторые памятники..., рис. 4, 5, 13, 15, 20.

27 С. А. Есаян, Ереван (археологический очерк), Ереван, 1969, с. 38, табл. 24.

28 Է. Վ. Խանզադյան, Էլառ-Դարանի, Երևան, 1979, աղ. XX, էջ 86։

կառուցվածքը վերջինիս զանգվածեղ տեսք է հաղորդում (II_{32})։ Այս բոլոր անոթների սև, շագանակագույն կամ գորշ անփայլ մակերեսները կրում են մրի հետքեր։ Թեյնիկաձև ամաններ մ. թ. ա. X—VIII դդ. թվագրվող կոմպլեքսներում հայտնի են Անգեղակոթից[29], Գորիսի շրջանի Տեղ գյուղից[30], Կարմիր բլուրի դամբարաններից, Քեթիից[31], Եղեգնաձորից[32], Այրիվանքից[33], Մինգեչաուրից, Սեիդ-Քենդից[34] և այլ վայրերից։

Քրեղաններ—օղակաձև կանթերով այս 10 ամանների մի մասի՝ վերին հատվածում ուղիղ բարձրացող կողն ավարտվում է դուրս ճկված շուրթով ($II_{33, 35}$), մյուսների իրանները կիսագնդաձև տեսք ունեն (II_{34}) կամ, նեղանալով ներքևում, ավարտվում են փոքր-ինչ ներսից ակվող կարճ, հարթ կտրված շուրթով (II_{36})։ Այս խմբի քրեղաններից մեկը օղակաձև կանթից բացի, որն ամրացված է կլորացող իրանի վերին՝ հորիզոնական հավելադիր ելունդագոտիներով զարդարված մասում, ունի նաև երեք կոնաձև ելունդազարդեր։ Քրեղանի մակերեսը սև, թեթևակի փայլեցրած է (II_{40})։ Նուրբ պատրաստված այս անոթի՝ դեպի ներս թեք կտրված շրթի մոտ երեք անցք է բացված։

Քրեղանների հաջորդ խումբը անկանթ ամաններն են։ Սրանց մի մասը վերին հատվածում թեթևակի դուրս հակված կողեր ունի, որոնք ավարտվում են սրվող շուրթով (II_{37}), մյուսներն առանձնանում են ներս թեքվող վզով (II_{39}), իսկ երրորդները վերին մասում ունեն ակոսազարդ, ուղիղ բարձրացող կողեր (II_{38})։ Սրանց ձևն է կրկնում ցածրադիր իրանով, դուրս փռված կողերով, ցածր նստուկով և դեպի դուրս թեք կտրած շուրթով ավարտվող մատուցարանը (II_{41})։ Միականթ և անկանթ այս քրեղանների զուգահեռները բազմաթիվ են մ. թ. ա. I հազ. սկզբի հուշարձաններում, որոնցում նախկինից եկող ձևերը, համալրվելով նոր հատկանիշներով ու մանրամասներով, բնորոշ են դառնում տվյալ ժամանակաշրջանի համար։ Այդ բնորոշ հատկանիշներից են շրթից սկսվող օղակաձև խոշոր կանթերը, որոնք փոխարինելու են գալիս ուշ բրոնզի վերջում սակավ հանդիպող՝ քրեղանների ուսի վրա ամրացված փոքր կանթերին։ Նորահայտ այս ամանների բնորոշ հատկանիշներից է նաև մակերեսի սև, գորշ, շագանակագույն և կարմրի տարբեր երանգավորումներն ունեցող անփայլ գույնը, որը փոխարինում է Զանգեզուրի՝ նախորդ դարաշրջանին հատկանշական սև, դեռևս թույլ փայլ ունեցող գույնին։ Նկատենք, որ այս տարածքի ուշ բրոնզեդարյան խեցեղենին բնորոշ՝ մակերեսին ալիքաձև տեսք հաղորդող ծալքագոտիները եզակի դեպքերում են երևան գալիս Սիսիանի նյութերի վրա։ Վերջիններիս զուգահեռներն են Ռեդկին լագերից, Կարմիր-բերդից, Մուխաննաթ-թափայից, Աստղի բլուրից[35], Շիրակավանից, Անգեղակոթից և մ. թ. ա. X—VIII դդ. այլ հուշարձաններից հայտնաբերված միականթ և անկանթ քրեղանները։

Թասեր—հայտնաբերվել են չորս օրինակ։ Երկուսը աղյուսագույն և գորշ, անփայլ մակերեսներով են. մեկը կլորացող իրանով և սրվող շուրթով միականթ (II_{44}), իսկ մյուսը՝ վերին մասում կտրուկ ներս թեքվող կողերով (II_{42}) փոքր ամաններ են, որոնք կրկնում են քրեղանների համապատասխան ձևերը։ Մյուս երկուսը թեթևակի կլորացող (II_{43}) կամ հիմքից շեշտակի լայնացող կողեր ունեն (II_{45})։ Նկարագրված տարբերակների զուգահեռները հայտնի են վերը թվարկված հուշարձաններում։

---

29 Օ. Ս. Խնկիկյան, Պեղումներն Անգեղակոթում (ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր», 1978, № 3, աղ. II)։

30 Նյութը պահպանվում է ՍՍՀՄ ՊՊԹ, գույք № 39941 («Отчеты археологической комиссии за 1898 г.», с. 166—168.—далее ОАК).

31 Նյութը հրատարակության է պատրաստում Լ. Ա. Պետրոսյանը։

32 Նյութը հրատարակության է պատրաստում Ա. Ս. Փիլիպոսյանը։

33 Պեղումները Հ. Հ. Մնացականյանի (չհրատարակված նյութեր)։

34 ОАК за 1900, вып. X, Спб., 1902, рис. 214.

35 С. А. Есаян, Древняя культура племен..., табл. 139. рис. 10; его же, Ереван..., рис. 19а.



Աղյուսակ III

ՆՈՐԱՎԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ.—Նկ. 11, 13—դամբ. № 1; Նկ. 1, 5, 14, 16—19, 26—դամբ. № 2; Նկ. 3, 15, 22, 24, 25, 27—դամբ. № 3; Նկ. 4, 22, 23—դամբ. № 4; Նկ. 2, 21—դամբ. № 5; Նկ. 30—դամբ. № 6; Նկ. 6—10, 12, 28, 29—դամբ. № 7։

Բաժակներ—ներկայացված են երեք նմուշից պահպանված մասերով։ Երկուսը գլանաձև, կենտրոնական մասում թեթևակի լայնացող և կլորացող տեսքով, ձգված իրաններով անոթներ են. մեկի իրանը վերին հատվածում զարդարված է ակոսագծերով ու դրանց միջև արված եռանկյունաձև սանդրատամ պատկերներով։ Երրորդ բաժակն ունի դեպի դուրս լայնացող հարթ նստուկ և վերևում լայնացող իրան (II_{52-54})։ Անոթների մակերեսները սև կամ գորշ են ու անփայլ։ Նման բաժակները մ. թ. ա. I հազ. սկզբին պատկանող կոմպ-

լեքսներում լայն տարածված նյութերից են։ Հայտնի են Անգեղակոթից, Կարմիր բլուրի նախաուրարտական շերտից, Դվինից, Մեծամորից[36], Շիրակավանից, Քեթիից, Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքի տարբեր հուշարձաններից (Իջևան, Գեղամի-աղբյուր, Դիլիջան և այլն), Գետաբեկ-Կալաքենդի դամբարաններից, Մինգեչաուրից և այլ վայրերից։

Գավաթներ—ստորաբաժանվում են մի քանի տարբերակի։ Դրանցից հինգը կլորացող իրաններով անոթներ են, որոնք ունեն դուրս ճկվող շուրթով ավարտվող կարճ, լայն վզեր և ձևով հիշեցնում են փոքր կճուճներ։ Այդ նմանությունն առավել ևս ընդգծում է աղեղնաձև կանթը, որը, սկսվելով շրթից, միանում է ակոսաձարդ ուսին (II$_{46}$)։ Ձևով սրանց է կրկնում մեկ ուրիշը, որի իրանի հակադիր կողմերից օղակաձև երկու բռնակներ են ամրացված։ Անոթի սև, թույլ փայլեցրած մակերեսը վերին հատվածում զարդարված է ակոսագծով ու փորագիր թեք գծերով (II$_{50}$)։ Նույն ձևն ունեն և մյուս երկու գավաթները, որոնց թեթևակի գոգավորված վիզն ավարտվում է սրվող շուրթով։ Սրանցից մեկի մակերեսը զարդարված է լայն մատնեքումով, իսկ կանթի վերին մասը ատամնավոր տեսք ունի (II$_{47}$)։ Գտնված երեք գավաթները ստորին մասում լայնացող և ապա դեպի վեր կտրուկ նեղացող կողերով, սև անփայլ մակերեսով անոթներ են, որոնց դուրս թեքված շրթից իրանի լայնացող մասին է միանում աղեղնաձև կանթը (II$_{49}$)։ Վզի նույն ձևն ունի նաև մի այլ գավաթ, որի իրանը, լայնանալով անոթի կենտրոնում, նրան երկկոնիկ տեսք է տալիս։ Անոթի լայնացող մասում օղակաձև բռնակ է ամրացված (II$_{51}$)։ Գավաթներից վերջին երկուսը կլորացող իրաններով և ուղիղ բարձրացող ցածր վզով ու լայն բերանով անոթներ են, որոնց վերին մասը զարդարված է ելունդավոր հորիզոնական զարդագոտիներով։ Կտրվածքում քառակող ձևի աղեղնաձև կանթերը, սկսվելով վզից, միանում են սև անփայլ կամ թույլ փայլեցրած մակերես ունեցող իրանների լայնացող մասին (II$_{48}$)։ Գավաթների նկարագրված տեսակները հայտնի են Կարմիր-բերդից, Արթիկից, Շիրակավանից, Անգեղակոթից, Կույբիշևից (Ջարխեչ), Օրջոնիկիձե գյուղի մոտ գտնվող Գեղամի աղբյուր և այլ հնավայրերից։

Եռոտանի մատուցարաններ—ներկայացված են երկու չամբողջացող նմուշներով և երրորդից պահպանված մեկ ոտիկով։ Մեկը խոշոր չափերի, կլորացող իրանով և դեպի դուրս թեք կտրած շուրթով քրեղանաձև աման է, որի երեք ոտիկներից մեկը բացակայում է։ Սև, թույլ փայլեցրած այս ամանը ներսից զարդարված է սեղմմամբ ստացված ուղղահայաց իջնող գծերով։ Ամանի շրթից սկսվող և իրանին միացող կանթը օղակաձև է։ Սև, թույլ փայլեցրած մակերես ունի նաև երկրորդ օրինակը, որի կլորացող իրանը վերևում ավարտվում է դեպի ներս թույլ գոգավորվող կողերով և կլորացող շուրթով։ Այս նմուշի շրթին ամրացված բռնակը եռանկյունաձև հարթակի տեսք ունի (II$_{56}$), որը նախաուրարտական ու վաղ երկաթի դարաշրջանի մշակույթին բնորոշ մանրամասներից է[37]։ Նախորդի պես, այս մատուցարանը զարդարված է սեղմմամբ ստացված գծաղարդերով, որոնք տարված են արտաքին և ներքին մակերեսների վրա։ Եռոտանի մատուցարաններ հայտնի են Շիրակավանից, Մինգեչաուրից և այլ՝ մ. թ. ա. I հազ. սկզբին պատկանող հուշարձաններից, թեև սրանք սակավ հանդիպող նյութերից են։

Կափարիչ—եզրամասում հարթ և ներսից թույլ հանվածք ունեցող շրջանաձև այս իրի կիսյակը դեպի կենտրոն աստիճանաբար բարձրանում և ձևավորում է ուղիղ մեջքը, որի վրա բռնակից պահպանված փոքրիկ ելուստ է առկա (II$_{55}$)։ Իրը ներկված է կարմիր և թեթևակի փայլեցրած է։ Սկավառակաձև կափարիչներ հայտնի են Թեյշեբաինիից, Շիրակավանից, Անգեղակոթից և այլ վայրերից։ Այդուհանդերձ, կափարիչները սակավ հանդիպող նյութերից

---

36 Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, աղ. X, К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ереван, 1977, рис. 12.

37 А. А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961, с. 59.

Ն, որը և խոչընդոտում է վեր հանել հետազոտվող դարաշրջանին պատկանող այս իրերի բնորոշ գծերը։

Այսպիսով Սիսիանի դամբարաններից հայտնաբերված նյութերի զուգահեռները, ինչպես տեսանք, առկա են մ. թ. ա. I հազ. թվագրվող հուշարձաններում, որը և թույլ է տալիս դրանք թվագրել նույն ժամանակաշրջանով։

ՆՈՐԱՎԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ—գտնվում է Նորավան գյուղից շուրջ 6 կմ հյուսիս-արևմուտք և Սիսիանի դամբարանադաշտից մոտ 4 կմ արևելք։ Այս դամբարանադաշտի 12 դամբարաններից պեղվեցին յոթը։ Դրանք պատկանում են դամբարանների I տեսակի «ա» տարբերակին։ Հայտնաբերված նյութերը նույն կոտրտված և թերի խեցանոթներն են։ Նույնն է և կմախքների վիճակը։ Նկարագրենք այդ դամբարաններից երկուսը։

Դամբարան № 1 (չափերը՝ 2,5×1,5×1,6 մ)—կողմնորոշված էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք։ Դամբարանախցի ծածկասալերի մի մասը բացակայում էր. պահպանված էին միայն երկուսը։ Դամբարանախուցն ազատելով 1 մ հասնող հողի փուխր շերտից, երևաց, որ այն նախկինում կողոպտված է եղել։ Դամբարանախցի հարավ-արևելյան հատվածում հայտնաբերվեցին բազալտից պատրաստված նավակաձև աղորիքի մաս (III_{11}) ու ձվաձև ծեծիչ (III_{13})։

Դամբարան № 2 (չափերը՝ 1,6×0,8×0,7 մ)—արևելք-արևմուտք կողմնորոշված դամբարանախցի արևմտյան հատվածում հայտնաբերվեցին կմախքի առանձին փշրված ոսկորներ ու զանգակաձև գլխակալով բրոնզե դաշույն (III_1), օղ (III_5), չորս կճուճ (III_{16-19}), բաժակի (III_{26}) և միականթ սափորի (III_{14}) բեկորներ։ Համանման նյութեր գտնվեցին և մյուս դամբարաններից։ Հիմնականում պատճենելով Սիսիանից հայտնաբերվածներին, համաժամանակյա այս նյութերը ներկայացված են դաշույնների, օղերի, խեցեղեն արտադրանքի նույն տեսակներով, որոնք առանձին դեպքերում դրսևորում են որոշ առանձնահատկություններ։ Այսպես, դաշույնները, որոնք երկուսն են, նույն սևանյան տեսակի զենքերն են, որոնց շեղբերը սակայն եռանկյունաձև են ու երկու երեսներից ունեն համանման ընդերկայնական թեթևակի ուռուցիկություններ ($III_{1,3}$)։ Դաշույնների այս տարբերակը ևս հանդես է գալիս նախորդին համաժամանակ և հայտնի է նույն հուշարձաններից, այսինքն տարածվում է Մինգեչաուրից Ախուրյան գետն ընկած տարածքում. հավանական է, որ այդպիսիների տարածման սահմանը գտնվում է առավել հարավ-արևմուտք։ Բրոնզի և երկաթի դարաշրջաններին պատկանող հուշարձաններում իրենց զուգահեռներն ունեն նաև կտրվածքում շրջանաձև, մոտեցող ծայրերով ավարտվող, հարթ մակերեսով ապարանջանը (III_4), օղերը (III_{5-6}), վանակատե ծլեպը (III_{12})։ Նույնն են և սարդիոնից գլանաձև ու սկավառակաձև (III_9), ինչպես և կրաքարից պատրաստված ուլունքները (III_8)։ Վերջիններիս շարքում, Սիսիանի հետ համեմատած, նորություն է կապույտ ապակուց պատրաստված ոսպաձև փոքրիկ ուլունքը (III_{10})։ Նշված ժամանակաշրջանի հուշարձաններում իր զուգահեռներն ունի նաև բրոնզից պատրաստված, եզրերում ատամնավոր կոճակը (III_7), որի ետին մասում ամրացված կամրջակում պահպանված են թելի մնացորդներ։

Պեղված նյութերի մյուս խումբը խեցանոթներն են։

Սափոր—ունի փքուն իրան և հատիկներով ու շրջաններով զարդարված աղեղնաձև կանթ։ Շրջաններից կազմված եռանկյունաձև պատկերներով են զարդարված նաև անփայլ, դարչնագույն մակերեսով այս անոթի իրանի վերին հատվածը, ինչպես և հորիզոնական տարված գոտիների ձևով՝ սափորի ստորին մասը (III_{14})։ Որևէ սափորի է պատկանել նաև կտրվածքում շրջանաձև տեսք ունեցող, սև, թույլ փայլեցրած, վերին մասում ծնկաձև կանթը (III_{27})։ Այս խմբի անոթներից վերջինը սև, թեթև փայլեցրած մակերեսով, բարձր վզով, լայնաբերան, անկանթ սափոր է, որի իրանը լայնանում է ստորին կեսում և կտրուկ նեղանալով, ավարտվում է հարթ հատակով (III_{15})։ Այս իրերի զուգահեռները, ինչպես տեսանք վերևում, գտնվում են մ. թ. ա. I հազ. սկզբի կոմպլեքսներում։ Վերջիններին կարելի է համալրել Արծվաբերդ (Ղրղի) գյուղի մոտ գտնվող Բուղա-բար կոչվող և այլ հուշարձաններով,

որոնցից հայտնաբերված անկանթ սափորները կրկնում են Նորավանի նմուշին։

Կճուճներ—ներկայացված են մի քանի տարբերակով։ Դրանցից երկուսը կլորացող իրաններով, կարճ վզով ու դուրս ճկված շուրթերով երկկանթ անոթներ են։ Մեկի իրանը վերին հատվածում զարդարված է հորիզոնական ելունդաղոտիներով, որոնք մակերեսին ալիքաձև տեսք են տալիս (III$_{18}$), իսկ մյուսը՝ սեղմմամբ ստացված եռանկյունաձև գծերով ու դրանց մեջ տարված օղակաձև նախշերով (III$_{19}$), որոնք ստացված են սնամեջ, խողովակաձև գործիքով։ Հաջորդ երկու կճուճները գնդաձև իրաններով, նույնպես նուրբ պատրաստված անոթներ են, որոնցից մեկի բարձր, գլանաձև վիզը ծալքավոր է (III$_{20}$), մյուսինը կարճ է և զարդարված սեղմմամբ ստացված ուղղահայաց գծերով։ Ամանի ուսին օղակաձև կանթ է ամրացված (III$_{16}$)։ Հաջորդ չորս կճուճները անփույթ պատրաստված, անբավարար թրծված անոթներ են։ Մեկի սև, անփայլ, մրոտված մակերեսով իրանը ստորին մասում թեթև գոգավորվում է։ Ամանի ուսին ամրացված են երկու պայտաձև ելունդաղարդեր (III$_{17}$)։ Նույն զարդն առկա է մեկ այլ կճուճի՝ որոշ չափով երկկոնիկ տեսք ունեցող իրանի վերին մասում (III$_{21}$)։ Երկու այլ կճուճներ կլորացող և գնդաձև իրաններ ունեն. մեկի հատակը հարթ է, մյուսինը՝ կլորացող։ Ամաններն ունեն կարճ, թեթև դուրս թեքված վիզ և իրանի հակադիր կողմերից ամրացված սեգմենտաձև, տափակ ելուստներ (III$_{22}$)։ Դուրս թեքված վիզ և գնդաձև իրան ունեն նաև վերջին չորս կճուճները, որոնք սև ու կարմիր անփայլ մակերեսներով ամաններ են, զարդարված հատիկներով, ակոսներով ու փորագիր ալիքներով (III$_{23,\ 28-30}$)։ Կճուճների նկարագրված տարբերակների զուգահեռներն են Ռեդկին լագերից, Բուղա-քարից, Անգեղակոթից, Ախլաթյանից, Ղարաբաղի Ախմախի գյուղից, Շիրակավանից և այլ՝ մ. թ. ա. X—VIII դդ. թվագրվող հուշարձաններից հայտնաբերվածները։

Բաժակներ—երկուսն են և կրկնում են Սիսիանից գտնվածներին, տարբերությամբ, որ ավարտվում են բարձր, ծալքավորված գլանաձև վզերով։ Այդ անոթներից մեկի շրթի ներսից սեգմենտաձև ելուստ-բռնակ է ամրացված (III$_{25,\ 26}$)։

Նյութերից վերջինը վերին մասում ծալքավորված, կլորացող իրանով, լայնաբերան գավաթ է, որն օղակաձև փոքրիկ բռնակ ունի (III$_{24}$)։ Սև, անփայլ մակերեսով այս գավաթը, ինչպես տեսանք Սիսիանի դամբարանադաշտի քննության ընթացքում, իր բազմաթիվ զուգահեռներն ունի վաղ երկաթեդարյան հուշարձաններում։ Այսպիսով, Սիսիանի և Նորավանի նյութերի քննությունից երևում է, որ դրանք կապվում են Հայաստանի վաղ երկաթի մշակույթի հետ և նրա բաղկացուցիչ մասն են։ Սակայն Նորահայտ այս նյութերը ավանդաբար շարունակում են նաև ուշ բրոնզեդարյան արտադրանքի ձևերը։ Այդ է վկայում, օրինակ, Նորավանից գտնված միականթ գավաթի ձևը, որը հայտնի է և ուշ բրոնզի վերջին պատկանող կոմպլեքսներում։ Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Տանձավերի՝ մ.թ. ա. XI—X դդ. թվագրվող դամբարաններից մեկում հայտնաբերված գավաթը, որից չի տարբերվում Նորավանի նմուշը։ Տանձավերի նշված դամբարանում առկա են երկկանթանի կճուճ ու տակառաձև բաժակ, որը նույնպես շրթի ներսից սեգմենտաձև ելուստ-բռնակ ունի[38]։ Ուշ բրոնզեդարյան հուշարձաններում իրենց զուգահեռներն ունեն և հատիկազարդ ու ակոսազարդ անկանթ կճուճները։ Այդ ժամանակաշրջանի լայն տարածված նյութերից են և եռոտանի փոքր թասերը, որոնք խոշոր մատուցարանների նախաձևն են։ Մ. թ. ա. II հազ. վերջին և I հազ. սկզբին պատկանող նյութերում իրենց զուգահեռներն ունեն նաև դաշույնները ու դանակները։ Սակայն ինչպես տեսանք, Սիսիանից և Նորավանից հայտնաբերված նյութական մշակույթը դրսևորում է նոր գծեր, երևան են գալիս նոր տեսակներ, որոնք հայտնի չեն նախորդ փուլում։ Ուշ բրոնզի մշակույ-

---

38 Օ. Ս. Խնկիկյան, Պեղումներ Տանձավեր և Շիկահող գյուղերում (ՊԲՀ, 1975, № 2, էջ էջ 239—244)։

թի հետ դիտվող ընդհանրությունները մատնանշում են այն անմիջական կապը, որը ի հայտ է գալիս այդ դարաշրջանների մշակույթների միջև։ Այս անմիջական կապը փաստարկվում է նաև գամբարանների կառուցողական առանձնահատկություններով։ Իրոք, հողից կամ հող ու քարից կազմված բարձր դամբարանաթմբերը, ներկա տվյալներով, Զանգեզուրի համար բնորոշ են դառնում ուշ բրոնզի դարաշրջանից՝ փոխարինվելով մ. թ. ա. I հազ. սկզբում ցածր քարալիցքեր ներկայացնող դամբարանաթմբերով։ Հետևաբար, տվյալ դեպքում երկու տեսակի դամբարանաթմբերի համատեղ առկայությունը փաստարկում է մի կողմից նախկին ավանդույթների շարունակական կապը և մյուս կողմից՝ նոր ձևի արմատավորումը։ Ինչ վերաբերում է դամբարանախցերի վերգետնյա կառուցվածքին, ապա այն հանդիպում է արդեն մ. թ. ա. XI—X դդ.՝ ստորգետնյա դամբարանախցերին զուգահեռ, բնորոշ դառնալով Զանգեզուրի համար հետագա ժամանակաշրջանում՝ որպես տեղական օջախի յուրահատուկ հատկանիշ։

Այսպիսով, Սիսիանի և Նորավանի նյութերը, թվագրվելով մ. թ. ա. I հազ. սկզբով (X—IX դդ.), պարզաբանում են Զանգեզուրի քիչ ուսումնասիրված նյութական մշակույթը և միաժամանակ ընդլայնում ընդհանրապես մեր պատկերացումները Հայաստանի նյութական մշակույթի մասին։

МОГИЛЬНИКИ В СИСИАНСКОМ РАЙОНЕ

ОНИК ХНКИКЯН

Резюме

В 1982—1983 гг. севернее г. Сисиан (в 4 км от него) и северо-западнее с. Нораван (в 6 км от него) были выявлены два некрополя, состоящие из курганов двух типов: а) низкие (высота 0,6—1 м, диаметр 8—16 м) из каменной насыпи и б) высокие (высота 1,8—2,5 м, диаметр 20—25 м) — с каменно-земляной насыпью. Погребальные камеры двадцати раскопанных курганов представляли собой каменные ящики, имеющие наземное устройство. Исключение составляли погребения № 1 и № 3 Сисианского некрополя, имеющие обычную форму врытых в грунт каменных ящиков (табл. 1 *ша, шр*). Ориентировка погребальных камер неустойчивая. Во всех погребениях прослеживается расчленение скелетов. Керамические изделия, за исключением единичных случаев, были преднамеренно разбиты и частично заброшены в погребальные камеры. Обнаруженные материалы (керамика, бронзовые и железные ножи, бронзовые кинжалы, предметы украшения и культа) Сисианского (табл. II) и Нораванского (табл. III) могильников синхронны и датируются началом I тыс. до н. э. (X—IX вв. до н. э.).